ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 246 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի N 780-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը՝

1. Սահմանել, որ «Բժիշկներ առանց սահմանների» (Շվեյցարիա) միության հայաստանյան մասնաճյուղի կողմից ձեռք բերված ներքոհիշյալ ապրանքները ներմուծվում են Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2022 թվականի հոկտեմբերի 31-ի «Բժիշկներ առանց սահմանների» (Շվեյցարիա) միության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Հեպատիտ Ց-ի դեմ պայքարի պարզեցված մոդելի ներդնում Հայաստանում» ծրագրի մասին» N 780-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում՝

1) բժշկական պարագաներ՝ 12 տեղ, 111 կգ ընդհանուր քաշով, 14,984.06 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը և այլ ծախսերը կազմել են 1,643.95 եվրո, ցանկը՝ համաձայն N 1 հավելվածի, Արևմտյան մաքսատուն-վարչություն.

2) բժշկական սարքավորումներ և պարագաներ՝ 6 տեղ, 278 կգ, 3,755.26 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմել են

1,933.38 եվրո, ցանկը՝ համաձայն N 2 հավելվածի, Արևմտյան մաքսատուն-վարչություն.

3) հեռահաղորդակցման ռադիոսարքեր և համալրող մասեր՝ մեկ տեղ, 9 կգ, 5,960.06 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 762,60 եվրո փոխադրման և այլ ծախսերը, ցանկը՝ համաձայն N 3 հավելվածի, «Արևմտյան» մաքսատուն-վարչություն.

4) գերձայնային սկանավորման բժշկական սարք՝ մեկ տեղ, 14 կգ, 38,161.50 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը և այլ ծախսերը կազմել են 755,25 եվրո, Արևմտյան մաքսատուն-վարչություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

05.04.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ